*Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

## *ԳՅՈՒՄՐԻ - ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ*

Շիրակի գավառի կենտրոն Գյումրին ունի դարերի պատմություն: Առաջին անգամ Շիրակի գավառը հիշատակվում է Սարդաշենից ոչ հեռու գտնված մ.թ.ա. VIII դարի ուրարտական մի արձանագրության մեջ: Ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ն դրում է. «Խալդի աստծո մեծությամբ Արգիշտին ասում է. «Նվաճեցի Էրիախի ցեղի երկիրը, նվաճեցի Իրդանիունի քաղաքը՝ մինչև Իշկիգուլու երկիրը»[1]:

Արձանագրության մեջ հիշատակված «Իրդանիունի» տեղանունը Հ.Կարագյոզյանը և Ս.Պետրոսյանը նույնացնում են «Կումայրի» տեղանվան հետ: Խնդրի կապակցությամբ Հ.Կարագյոզյանը գրում է. «Իրդանիունի տեղանունը կազմված է *Իրդ* (գետ) բառով և *Անիու* հատուկ անունով (կամ Անիո): *Անիո* ձևը դրված է հայերենի սեռական հոլովով, որից կարելի է բխեցնել նախնական *Անիա* ձևը: Այս «Անիա» քաղաքի անունը հետագայում տրվել է այն գետին, որը հոսել է հիշյալ բնակավայրի մոտով՝ Իրդ-Անիո կամ «Անիա քաղաքի գետ»[2]: Մ.թ.ա.XIII դարում կառուցված Իրդանիո քաղաքը գտնվել է Էրիախի երկրի կենտրոնում՝ Կումայրիի տեղում կամ նրա մոտակայքում: Հետագայում Իրդանիու քաղաքի անունը մոռացվում է: Այն հիշատակվում է արդեն քաղաքի արվարձաններից մեկի՝ Կումայրու անունով, որը տարածվում է ամբողջ Իրդանիու բնակավայրի վրա: Կումայրին Իրդանիոյի արվարձան լինելու մասին իր կարծիքը Հ.Կարագյոզյանը հիմնավորում է Կումայրի տեղանվան ստուգաբանությամբ, որի *Կում* և *այրի* բաղադրիչները ունեն գրեթե միատեսակ իմաստներ՝ «գյուղ» կամ «բնակավայր»[3]:

Ընդհանուր առմամբ կողմ լինելով այս տեսակետին՝ Ս. Պետրոսյանը Իրդանիունին (կամ Իրդանիան) տեղադրում է Գյումրու տարածքում և նույնացնում «Կումայրի» հնավայրի հետ: Ավելին, նա «Կումայրի» հնավայրը տեղադրում է քաղաքի արևմտյան մասում, Չարկրգի ձոր կոչվող գետակի ձախ ափին, նշելով, որ այդ գետակը սեպագրային շրջանի Irdan-գետն է, իսկ Կումայրի հնավայրը ափամերձ Իրդանիունի քաղաքն է[4]:

Հետագայում Կումայրին որպես գյուղ հիշատակվում է մ.թ. 774 թ. հակաարաբական ապստամբության ժամանակ: Ղևոնդ Պատմիչը, արձանագրում է հետևյալը. «Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի, և ամենայն սպառազինութեամբք, և մտերիմ զինքն երևեցուցանէր զօրացն կազմիցի: Եւ որոշեալ զինքն ի միաբանութենէ նոցա՝ հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի, և սպանանէր գհրամանատար հարկին: Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս»[5]:

Կումայրի գյուղը հիշատակվում է նաև XIII դարում[6],և այնուհետև մինչ XIX դարի սկիզբը գյուղի մասին տեղեկություններ այլևս չեն հանդիպում: Արդեն XIX դարի

---

[1] *Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи. Изд. АН. СССР, М., 1960, текст 133.*

[2] *Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն, Կումայրին ըստ սեպագիր և այլ աղբյուրների, ՇՊՄԺ Հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1996, էջ 13:*

[3] *Նույնը, էջ 14:*

[4] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, IRDANIU(NI) բնակավայրի տեղադրության և անվան ստուգաբանության շուրջ, ՇՊՄԺ Հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 18-19:*

[5] *Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի Հայոց, Սանկտ-Պետերբուրգ, 1887, գլ. ԼԴ., էջ 138:*

[6] *Այդ մասին մանրամասն տե՛ս Ս. Պետրոսյան, Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական, «Գիտություն և տեխնիկա», Եր., 1983, թիվ 4, էջ 26: Հեղինակը մեջբերում է Սանահնադարանի 1886 թվահամարը կրող ձեռագրից մեն Հովսափին վերաբերող մի պատառիկ. «Ես մեղուցեալ և յետինս ի կրաւնաւորս Ովսափս, որ էր ազգաւ եւ առհմիւ ի մեծ գեղաքաղաքէն Կումիրոյ...»:*

սկզբին Կումայրի գյուղի փոխարեն հիշատակվում է Գյամրին, որը ռուսական իշխան Ցիցիանովի առաջին Երևանյան արշավանքի ժամանակ՝ 1804թ. հունիսի 10-ին, գրավվել էր գեներալ Տուչկովի կալմից [7]:

Հայկական սկզբնաղբյուրներում Գյումրին հիշատակվում է Գիմրի, իսկ ռուսական աղբյուրներում Գումրի ձևերով: Գյուղի նոր՝ Գյումրի անվան առաջացումն ու նշանակությունը մի շարք հակասական, երբեմն նաև անհեթեթ կարծիքների առիթ է տվել: Հովհաննես Խոջայանցի կարծիքով. «Գիմրի բառը կրճատված է: Իրականում այն նշանակում է «Գումարի», որովհետև սա եղել է զորաց գումարման տեղը Գագիկ արքայի ժամանակներում, որը նստում էր Անիում»[8]: Գյումրի տեղանունը յուրովի է բացատրել Կ.Գանը: «Առաջ այստեղ եղել է ոչ սոտ թուրքական ամրություն,- գրում է Կ.Գանը,- կամ ինչ-որ մաքսային ուղեկալ, որը ազատ անցնելու թույլտվության համար մաքս՝ «gumruk» էր գանձում: Այստեղից էլ գյուղը առացել էր իր անունը՝ Գյումլի»[9]: Կ.Գանին համակարծիք է նաև 1854-1855 թվականների ռուս-թուրքական պատերազմի մասնակից սպաներից մեկը, որը 1854 թվականի ապրիլի 20-ին իր զինվորական օրագրում կատարել է այսպիսի գրառում. «Ալեքսանդրապոլը, ուր եղավ մեր կորպուսը, թուրքերն անվանում են Գումրի, որ նշանակում է մաքսատուն՝ «gumruk», որովհետև իրոք, այստեղ եղել է նրանց մաքսատունը»[10]:

Վերը նշված վերջին երկու հեղինակներն էլ *Գյումրի* տեղանունը թյուրիմացաբար կապում են թուրքական «gumruk» բառի հետ այն դեպքում, երբ թուրք-սելջուկներն Անդրկովկաս են թափանցել միայն XI դարում, իսկ Գյումրին *Կումայրի* ձևով գոյություն է ունեցել դեռևս արքայական ժամանակներից: Միանգամայն անընդունելի է նաև Խոջայանցի կարծիքը, թե Գյումրին «Գումարի» բառի կրճատված ձևն է: Մենք համակարծիք ենք այն պնդմանը, թե *Կումայրի* ձևն է, որ դարերի ընթացքում հնչյունական փոփոխությունների ենթարկվելով, ավել է *Կումերի-Կումիրի-Կումրի* ձևը: Վերջինս էլ, ավելի աղավաղվելով, դարձել է *Գումրի*, իսկ որոշ ժամանակ անց՝ *Գյումրի*, որը հայերենի հնչյունական օրենքներին խորթ և, բնականաբար, մերժելի ձև է:

Չծանրանալով Կումայրի-Գյումրուն վերաբերող անցքերի շարադրման վրա՝ փորձենք պարզել, թե ինչ է իրենից ներկայացրել XIX դարի առաջին կեսի Գյումրի-Ալեքսանդրապոլը պատմաժողովրդագրական տեսակետից:

Կումայրի բնակավայրը միջնադարում գտնվել է այժմյան «Չերքեզի ձոր» («Չարքրզի ձոր») կոչվող վայրում[11]: XIX դարի սկզբին այն մի փոքրիկ գյուղ էր, որի բնակիչները զանազան հալածանքներից պաշտպանվելու համար «Չերքեզի ձոր» փայրից աստիճանաբար բարձրացել են բլրի վրա, որը հետագայում դարձել է ձևավորվող քաղաքի «Գեղցոց մահլեն»*: Այստեղից ներքև ավելի ուշ առաջանում է «Ձորի մահլան» կամ «Ձորի թաղազը»՝ քաղաքի հիմնական թաղամասերից մեկը:

Ժամանակակիցները վկայում են, որ Գյումրի գյուղը XIX դարի սկզբներին գտնվել է «Չերքեզի ձորից» դեպի հյուսիս-արևելք և ունեցել է մի հին եկեղեցի: Այդ գյուղում ապրել են մոտ 30 տուն պարսիկներ և 20 տուն պարսկահպատակ հայեր, որոնք տեղավորված էին տարբեր թաղամասերում և ապրում էին հաշտ[12]: Կարնո գաղթականները պատմել են, որ իրենց՝ այստեղ գալու օրերին նույն ձորի գլխին, մի հարթ տեղում գտնվում էր 100 տնից բաղկացած Գյումրին, որն ուներ սև քարով շինված մի հին եկեղեցի: Ամրոցի կառուցումից հետո գյուղն աստիճանաբար տեղա-

---

[7] *Լ և ռ, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1984, էջ 206:*

[8] *Հ. Խ ո ջ ա յ ե ա ն ց, Գիմրի, «Արարատ», Էջմիածին, 1871, թիւ Թ. էջ 312:*

[9] *К. Г а н, Опыт объяснения кавказских географических названий, Тифлис, 1909, стр. 8.*

[10] *Военный сборник, т. XI, отдел II, Походный дневник, 1854-1855 г.г., СПб., 1860, стр. 483-484.*

[11] *Հ.Գ ա ր ր ի ե լ յ ա ն, Լենինական, Եր., 1984, էջ 11:*

* *Մահլա-թաղ, թաղամաս*

[12] *Ս. Թ ա մ ր ա զ յ ա ն, Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը (1938թ.), ձեռագիր, ՊԻԱ, գործ 103, Թամրազյանի նյութերը, տետր 1: Այդ մասին տես նաև՝ Կ. Մատինեանց, Ալեքսանդրապոլի վաճառականները, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1874, 2 փետրվարի, թիվ 5, էջ 3:*

փոխվել է ավելի վեր (այժմյան քաղաքի հյուսիս-արևելյան կողմը), իսկ հին եկեղեցու տեղում 1857 թվականին կառուցվել է նորը՝ Ս.Նշան եկեղեցին[13]: Իրենց «Տեղագրություններ»-ում Ղ.Ալիշանն[14] ու Պ. վարդապետ Պետրոսյանը[15] նշում են, թե Սարմաշենից 5-6 մղոն վերև, 1.5 մղոն հեռու Արփայի ափից, կա մի հին գյուղ՝ Կումայրին, ուր մինչև 1800 թվականը կար նաև ամիրություն: Այդ գյուղն այլազգիները անվանում էին Կիւմրի կամ Գիւմրի և ուներ հազիվ 70 տուն: Լեոն ավելացնում է. «1826 թվականին Երևանի Հյուսեին Ղուլի խանի արշավանքի հետևանքով Գյումրին վերածվել էր 50 անից բաղկացած գյուղի»[16]:

1801 թվականին Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո ռուսական քաղաքական շրջաններում աճեց հայկական հողերի միավորման ձգտումը: Ռազմական նպատակների համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող Գյումրին բնականաբար չէր կարող վրիպել ռուսական զինվորականության ուշադրությունից, և ռուսական երամանատարության ռազմական պլաններում արդեն ուրվագծվում էին բնակավայրը ռազմական հենակետի վերածելու նկրտումները:

1804 թվականին, երբ ռուսական կազակային առաջին խմբերը մտան Գյումրի, գյուղի շրջակայքն ամայի էր: Այստեղ տեղակայված կազակային կայազորի զինվորների համար գյուղի մոտ 1804թ.[17]կառուցվում է բնակելի թաղամաս: Կարճ ժամանակ անց այստեղ ստեղծվում է բավականին ամրացված սահմանային կայան, իսկ 1817 թվականին մի անգլիացի ճանապարհորդի այցելության ժամանակ այդ վայրն արդեն զբաղեցնում էր ռուսական բավականին մեծ մի կայազոր[18]: Ռուսների զորալին ուժի ներկայության շնորհիվ հուսալի դառնալով՝ Գյումրին սկսում է դեպի իրեն ձգել պատերազմներից ու զրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին: Գյումրի են գալիս ապահով անկյուն փնտրող հայերի նորանոր ընտանիքներ, որոնք տեղափոխվում են «Ձորի մահլայում»:

Բնակավայրի անտեսական կյանքն աշխուժանալ սկսեց միայն 1826-1829 թվականներից հետո, երբ նրա տարածքում տեղաբաշխվեցին մեծ թվով գաղթականներ:

Ադրիանապոլսի պայմանագրի կնքմանը հաջորդած արևմտահայերի գաղթին որոշակի կազմակերպվածություն հաղորդելու նպատակով Թիֆլիսում գեներալ Պասկևիչի կարգադրությամբ հիմնվում է հատուկ կամիտե՝ Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկու գլխավորությամբ[19]: Այս կոմիտեն զբաղվում էր գաղթականներին ընդունելու, տեղաբաշխելու, օժանդակություններ և արտոնություններ տալու խնդիրներով, որոնց վերաբերյալ կետերից մեկում պահանջվում էր, որ որպես կանոն՝ գաղթականների քրիստոնեական նոր գյուղերը խառը չլինեն մահմեդական բնակիչների հետ, քրիստոնյաները կազմեն առանձին գավառակներ կամ մահլաներ, նրանց տները կառուցվեն ուղիղ գծի վրա, «երեք սաժեն լայնությամբ» փողոցներ թողնվեն, իսկ տները լինեն հաստատուն, հարմարություններով օժտված և այլն[20]:

Օգտվելով ռուսական կառավարության տված վերոհիշյալ արտոնություններից և ընձեռած հնարավորություններից՝ արևմտահայ գաղթականները սկսեցին տներ կառուցել նաև Գյումրիում: Աստիճանաբար առաջանում էին նոր թաղամասեր: Դեռ դարի սկզբին այստեղ բնակություն հաստատած ռուս զինվորները ունեին իրենց թաղը, որը գտնվում էր քաղաքի հարավային մասում և կոչվում էր «Սլոբոդկա»: Մոտ 40-50 տուն մահմեդականները Գյումրու հարավ-աքևելքում (այժմյան ավտոկայանից մինչև հին գերեզմանոց) հիմնեցին «Թուրքի մահլեն»: Դրանից վերև, դեպի հյուսիս, 150 տուն հույները հիմնեցին «Ուրումնոցը» կամ «Հունաց մահլեն»: 30-40 տուն հայ բոշաները

---

[13] *Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, Գյումրի-Լենինականի անցյալը (1935թ.), ձեռագիր, ՊԻԱ, գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, ներածություն:*

[14] *Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 154:*

[15] *Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պօղոս վարդապետէ Պետրոսեան. «Արարատ», Էջմիածին, 1870, թիւ Գ, էջ 55;*

[16] *Լ ե ո, նշվ. աշխ. էջ 458:*

[17] ***Кавказский календарь на 1851 год, отд. III, Тифлис, 1850, стр. 104.***

[18] ***Х. Л и н ч, Армения. Путевые очерки, этюды, Тифлис, 1910, стр. 162.***

[19] ***АКАК, т. 7, док. 818, Тифлис, 1878, стр. 830.***

[20] *Ալ. Ե ր ի ց յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 325:*

հիմնեցին «Բոշի մահլեն» (այժմյան Սայաթ-Նովա փողոցից մինչև նախկին եանբալխանաք ընկած տարածքը): Մոտ 50 տուն հայ կաթոլիկների ջանքերով հիմնվեց «Ֆռանգների մահլեն»(Օրխարդուց գիմնազիայից մինչև ցինվորական կոմիսարիատ ընկած տարածքում): «Հունաց մահլից» հյուսիս խղճուկ տներ էին կառուցել աղքատ գաղթականները, որոնց թաղը «Հաղեպղան» էր կոչվում, իսկ եին գյումրեցիներն էլ բերդի կառուցման պատճառով տեղավորվել էին գերազանցապես «Ձորի մահլում»[21]:

1836 թվականին կատարվում է Գյումրու առաջին հատակագծումը, ըստ որի քաղաքն ուներ քառանկյունի տեսք՝ երկայնքով և լայնքով իրար հատող փողոցներով[22]:

Բնակավայրի մեծանալու հետ մեկտեղ՝ աճում էր նաև նրա քաղաքական, ռազմական և տնտեսական նշանակությունը: Նույն 1836 թվականին ավարտվում է բերդի կառուցումը: 1837 թվականին Գյումրի այցելած Նիկոլայ Ա կայսրը դիտում է բերդը, հիմնադրում է բերդում կառուցվելիք Ս. Ալեքսանդրայի անունը կրող ռուսական եկեղեցին և Գյումրին վերանվանում Ալեքսանդրապոլ: Ռուսաց կայսեր կողմից քաղաքի անվանափոխությունը ժամանակակիցների կալմից աեղի է ավել մի շարք եռկսաական, եաճախ ոչ ստույգ դատողությունների:

Այս եարցին ժամանակագրական առումով սաաջինը՝ 1838 թվականին, անդրադարձել են հայ ժողովրդի պատմության քննությանը վերաբերող վավերագրերի ժողովածուն կազմողները: Նրանք գրում են, թե երբ Նիկոլայ Ա-ն դիտեց նոր կառուցվող ամրոցը և Սուրբ մեծ նահատակ թագուհի Ալեքսանդրայի պատվին հիմնվող եկեղեցին, Նորին Կայսերական Մեծությունը հաճելի եղավ նաև Գյումրի քաղաքն անվանել Ալեքսանդրապոլ[23]: Ալ.Երիցյանցը այդ մասին գրում է, որ հոկտեմբերի 4-ին կայսրը հասավ Գյումրի, ուր «նույն օրը հիմն դրեց եանուն սրրուհվույն Ալեքսանդրի ռուսական եկեղեցվո և հրամայեց կոչել քաղաքն Ալեքսանդրապոլ»[24]: Ղ.Ալիշանն իր «Շիրակ» աշխատության մեջ Գյումրին Ալեքսանդրապոլ և բերդը Ս.Ալեքսանդրայի անունով կոչելը վերագրում է Նիկոլայ Ա-ի կնոջ՝ Ալեքսանդրա Ֆյոդորովնայի պատվին: Նա գրում է. «Երկոքին (քաղաքն ու ամրոցը - Ա.Հ.) միանգամայն կոչեցան հանուն կայսրուհվոյն Ալեքսանդրապոլիս»[25]: Այս հարցի մասին հակասական տեղեկություններ են հաղորդում նաև Վ.Պոտտոն և Կ.Գանը:

Ռազմական պատմաբան Վ.Պոտտոն իր «Հին կովկասցիների եիշատակին» գրքում (1897թ) նշում է, թե Գյումրիում հանգստյալ կայսրը (Նիկոլայ Ա- Ա.Հ.) դիտեց կառուցվող ամրոցի շինարարական աշխատանքները, ներկա եղավ «հանուն Ս.Նիկոլայ այժմյան ամրոցային տաճարի հիմնադրմանը և հրամայեց հանց քաղաքը կոչել Ալեքսանդրապոլ[26]»: Ըստ Վ.Պոտտոյի, Գյումրին Ալեքսանդրապոլ է կոչվել ի պատիվ Ալեքսանդր Ա կայսեր, որի օրոք այն միացվել է Ռուսաստանին: Եվ վերջապես Կ. Գանը այս մասին իր «Կովկասյան աշխարհագրական անվանումների մեկնաբանման փորձ» աշխատության մեջ այն կարծիքն է հայտնում, թե Ալեքսանդրապոլը 1837 թվականին Նիկոլայ Ա-ի ներկայությամբ հիմնադրված քաղաքի և ամրոցի անվանումն է, ընդ որում նա նաև ընդգծում է, որ քաղաքը Ալեքսանդրապոլ է կոչվել ի պատիվ Ալեքսանդրա Ֆյոդորովնա կայսրուհու[27]:

Իրականում այս հարցի պատասխանը այլ է : Ինչպես մնացում է Կովկասի կառավարչապետ Գ. Ռոզենի գրությունը՝ ուղղված Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Ն. Փալավանդովին, 1837 թվականին Գյումրի <u>ամրոցը</u> (ընդգծումը մերն է - Ա. Հ.) Ալեքսանդրապոլ, հունա-ռուսական եկեղեցին Ս.Ալեքսանդրա և 1840 թվականին <u>քաղաքը</u> (ընդգծումը մերն է - Ա.Հ.) Ալեքսանդրապոլ է կոչվել ռուսական եկեղեցու մեծ նահատակ Ս.Ալեքսանդրա թագուհու և ոչ թե Ալեքսանդր Ա-ի կամ Ալեքսանդրա Ֆյոդո-

---

[21] *ՊԻԱ, գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր I, գլուխ 2:*
[22] *Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Գյումրին, նրա մարդիկ և սովորույթները, Գյումրի, 1996, էջ 7:*
[23] *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч.2, М.,1838, стр. 420.*
[24] *Ալ. Ե ր ի ց յ ա ն ց , Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս Բ. Թիֆլիս, 1895, էջ 434:*
[25] *Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 154:*
[26] *В. П о т т о, Памяти старых кавказцев, Тифлис, 1897, стр. 42-43.*
[27] *К. Г а н, նշվ. աշխ., էջ 8:*

բովնայի պատվին[28]: Ստորև ներկայացնում ենք այդ կարևոր փաստաթղթի հայերեն թարգմանությունը.

«Վրաստանի քաղաքացիական նահանգապետ, պարոն խակտկան պետական խորհրդական և ասպետ, իշխան Ն. Փալավանդալին

Ողորմած Տեր Կայսրը Բարձրագույնս բարեհաճեց հրամայել Գյումրի ամրոցը այսուհետև անվանել Ալեքսանդրապոլ, ճաև անցած հոկտեմբերի 4-ին Նորին Բարձրության ներկայությամբ հիմնադրված համառուսական եկեղեցին կոռուցել ի պատիվ Սուրբ Մեծ նահատակ Ալեքսանդրա թագուհու:

Այդպիսի բարձրագույն ցանկության մասին գեներալ-համհարզ Ադլերբերգը նոյեմբերի 5-ին 399-ը հրամանով տեղեկացրեց ինձ պատշաճ կատարման համար, ավելացնելով, որ ինքը միաժամանակ այդ մասին հաղորդել է պարոն ռազմական մինիստրին՝ Գյումրի ամրոցի վերանվանման հրամանը բանակին հայտարարելու համար:

Այդ մասին իրազեկում եմ Ձերդ սրայծառափայլությանը:

Գեներալ-համհարզ Գ. Ռոզեն

Շտաբի պետ գեներալ-մայոր Վոլոչևսկի

թիվ 3208

8 նոյեմբերի 1837 թվական, Թիֆլիս »

Այստեղից միանգամայն պարզ է դառնում, որ Ալեքսանդրապոլ է անվանվել 1836 թվականին նոր կառուցված բերդամրոցը և ոչ թե Գյումրի գյուղը, որն ի դեպ, 1837 թվականից սկսած, ստանալով քաղաքի կարգավիճակ, իր վրա վերցրեց նաև բերդի Ալեքսանդրապոլ անվանումը:

Տեղի հմաա վարպետների ձեռքով կառուցված վերոհիշյալ ամրությունն իր 7 բաստիոններով, զորանոցներով, կարմիր և սև տուֆի համադրությամբ գեղեցիկ և հզոր պարիսպներով, իր փառահեղ դիրքով քաղաքին տալիս էր ուրույն շուք ու հանդիսավորություն: «Բերդը,- գրում է Պողոս վարդապետ Պետրոսյանն իր «Տեղագրութիւն Շիրակայ» աշխատության մեջ,- նայում է քաղաքին լայնանիստ, ամրակառույց և վայելչադիր: Կա խաչաձև ռուսական եկեղեցի՝ բոլորակավոր գմբեթով, ինչպես անեն մզկիթները: Բերդն ունի վառոդի 36 սենյակ, 200 թնդանոթ, ցորենի ու զարդ լցված ամբարներ, 600 սենյակ ըլ արամադրված է 10 000 զորքի բնակության համար, թեպետ սովորաբար բերդում գտնվում են 4000 զինվոր»[29]:

Ս. Էփրիկյանը նույնպես, նկարագրելով բերդը, գրում է հետևյալը. «Այս բերդը, դարուս զինուորական նշանաւոր շենքերեն մին կարելի է համարել, թէ ամրութեամբն և թէ ճարտարապետեաա կառուցմամբ: Ունի զինաց մթերանոցներ, ամբարանոց և գրեթէ 16 000 հոգւոց բնակարան, ստ բանա մը, առանձին հիվանդանոց և բերդապահ զորավորի համար յատակ պալատ: Ասոցմէ զատ ունի խաչաձեւ, գեղեցիկ եկեղեցի մը....և հիւսիսային կալմը Կարմիր կոչուած աշտարակ մը: Մեկ խոսքով բերդս իոր այս ամենայն հանգամանօք կրնար երկար ժամանակ ղիմադրել թշնամւոյ ուժերուն»[30]: Օտարազգի հեղինակներից Ալեքսանդրապոլի բերդի մասին բավականին մանրամասն տեղեկություններ են թողել Մ. Վագները[31] և Կ. Սպասսկի-Ավտոնոմովը[32]: Վերջինս հավաստացնում է. «Ամբողջ Անդրկովկասում չկա Ալեքսանդրապոլի բերդի նմանը: Այն համարվում է դարի գլուխգործոց: Իսկ ինչ վերաբերում է բերդի եկեղեցուն, ապա այն մեզ՝ ասիացիներիս համար, կատարելություն է: Կարելի է ասել ավելին՝ Ալեքսանդրապոլի բերդն ու եկեղեցին ամբողջ Անդրկովկասում սայժմ ռուսական տիրապետության միակ հուշարձաններն են»: Նշենք որ, Ալեքսանդրապոլի բերդի հոյակերտ շինություն-

---

[28] *Մ. Դ ա ր բ ի ն յ ա ն, Գյումրին Ալեքսանդրապոլ վերանվանելու մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1981, թիվ 2, էջ 139-140:*

[29] *Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պողոս վարդա. Պետրոսեան, նշվ. աշխ., էջ 56.*

[30] *Ս. Է փ ր ի կ յ ա ն, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 45:*

[31] *Մ. Վ ա կ ն ե ր, Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վիեննա, 1851, էջ 126-127:*

[32] ***К. С п а с с к и й – А в т о н о м о в, Второе посещение Арарата, "Отечественные записки", т. 38, ном. 1-2, СПб., 1845, отд. VIII, стр. 14.***

ների շարքում որպես գլուխգործոց էր հիշատակվում նաև եռահարկ, քարե ամուր պարսպանյալ նկարագրանքը[33]:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում Գյումրի - Ալեքսանդրապոլը XIX դարի 30-40-ական թվականներին: Ըստ ժամանակակիցների բազմաթիվ վկայությունների, այդ տարիների Ալեքսանդրապոլը սխալ սահման քաղաք էր՝ կեղտոտ, կավից և անկյուն տներով: Լինելով դեռ շատ երիտասարդ, այնուամենայնիվ արդեն հասցրել էր ձեռք բերել «ծեր ու քայքայված» քաղաքի ֆիզիոնոմիա: Այն ուղղակի մի «քարավանսարա էր մեծ ճանապարհի վրա[34]»:

XIX դարի առաջին կեսի քաղաքային տնտեսության անմխիթար վիճակի մասին «Մխուրյանը» գրում է. «Ցեխի պատճառով քաղաքի գլխավոր փողոցները անանցանելի են, իսկ ինչ վերաբերում է այսպես կոչված «քոռ ուլիցներին», ապա առավել ևս տանէ, այնպիսի ողորմելի դրության մեջ են, որ գլուխը և ոտը չկոտրելու համար ցերեկն անգամ պետք է կրակով մառ գալ»[35]:

Դ. Անանունի՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատության առաջին հատորում հրապարակված գյումրեցիների բողոք-նամակը՝ ուղղված ռուսական ցարին, թույլ է տալիս եզրակացնելու, որ քաղաքային կյանքի նմանատիպ դրությունը ինչ-որ չափով արդյունք էր նաև նրա անորոշ, ավելի շուտ երկակի կարգավիճակի[36]: Մինչև 1840 թվականը տեղական, զինական և ռազմականական մարմինների կողմից ալեքսանդրապոլցիները հարկվում էին թե՛ որպես քաղաքացիներ և թե՛ որպես գյուղացիներ[37]: Բնականաբար, հարկային այսպիսի քաղաքականությունը չէր կարող խթան հանդիսանալ քաղաքի և նրա անտեսության զարգացման համար: Հետևաբար դժվար է գերագնահատել քաղաքի զարգացման ճակատագրում 1840 թվականին նրա՝ նոր ձևավորված գավառի կենտրոն դառնալու հանգամանքը, ինչը կարճ ժամանակում նկատելիորեն փոխեց քաղաքի դեմքը: Գտնվելով առևտրական ճանապարհի վրա, որն իր մի հատվածով համընկնում էր նաև «ալի ճանապարհին», քաղաքն իբրև հացառատ շրջանի կենտրոն, հացահատիկ էր մատակարարում ճանապարհի երկու կողմերի շրջակա մեծ թվով գյուղերին և նույնիսկ նահանգի կենտրոն Երևանին, որը, հեռու գտնվելով պետության առևտրական կենտրոններից և հաղորդակցության ճանապարհներից, վերածվել էր որոշ չափով ինքնամփոփ, անդական նշանակություն ունեցող արհեստներով բնակչության նեղ պահանջները ապահովող քաղաքի[38]:

Քաղաքական և տնտեսական տեսակետից աստիճանաբար զգալի նշանակություն ստանալով, սկսած 1846 թվականից Ալեքսանդրապոլը երկրորդական գավառային կենտրոնից աստիճանաբար վերածվում է նահանգային առաջնակարգ գավառակենտրոնի, որն իր անտեսական նշանակությամբ գերազանցում էր նույնիսկ նահանգի կենտրոն Երևանին:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլ քաղաքի ժողովրդագրությանը, ապա նշենք, որ քաղաքային բնակչության աճն ամբողջ գավառի օրինակով կատարվել է հիմնականում արհեստականորեն՝ գերազանցապես 1829-1831 թվականների թուրքահայերի

[33] Գ. Տ է ր - Դ ա վ թ յ ա ն ց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 24 մարտի, թիվ 11, էջ 3:
[34] Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն ց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 3 նոյեմբերի, թիվ 42, էջ 3; Ալ Մխիթարեանց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 28 ապրիլի, թիվ 15, էջ 3; Այդ մասին տես նաև՝ Patrise Filius, Физио-номия и нравы Александрополя, "Кавказ", Тифлис, 1854, 12 июня, ном. 45, стр. 177-178; "Дневник офицера, состоящего в отряде, действующем на кавказско-турецкой границе. Отрывок 1. Лагерь под Александрополем", "Кавказ", Тифлис, 1854, 16 июня, ном 46, стр. 183-184.
[35] Շ ա հ է ն, Փողոցներ չունենք, «Մխուրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 16 փետր., թիվ 8, էջ 2:
[36] Դ. Ա ն ա ն ո ւ ն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ.Ա, Բաքու, 1916, էջ 179-183:
[37] Н. Н е ф е д ь е в, Взгляд на Армянскую область, из путевых записок Н. Нефедьева, СПб., 1839, стр. 3.
[38] Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Երևանի պատմությունը (1801-1879), Եր., 1959, էջ 403:

գաղթի շնորհիվ: Եթե 1820-ական թվականներին Գյումրին ուներ ընդամենը 300 տուն[39], ապա 1831 թվականի մարդահամարի տվյալներով այստեղ ապրում էր արդեն 3444 մարդ միայն արական սեռից (ի դեպ, մինչև XIX դարի 50-ական թվականները Ալեքսանդրապոլում և գավառի մի շարք այլ տարածքներում անցկացված մարդահամարների տվյալները վերաբերել են միայն արական սեռին), որից 250-ը՝ մահմեդական, իսկ 3194-ը՝ հայ[40]: 1842 թվականին անցկացվում է «Կամերալ ցուցակագրման վերստուգում», որի արդյունքում Ալեքսանդրապոլի բնակչության թիվը նշվում է արդեն 1 729 ընտանիք[41], իսկ 1848 թվականին[42] 1982 ընտանիք կամ 5537 հոգի արական սեռից, որից 5269 հոգի՝ հայ, 58-ը՝ հույն, 210-ը՝ թաթար: Վերջապես, 1855 թվականի տվյալներով Ալեքսանդրապոլ քաղաքում ապրում էր 11 358 մարդ, որից 5751-ը՝ արական, 5607-ը՝ իգական սեռից[43]:

Այսպիսով, եթե 1830-ական թվականների Ալեքսանդրապոլի մասին խոսում էին ընդամենը որպես «գեղեցիկ ապագա խոստացող»,[44] բայց արևելյան տիպի խղճուկ քաղաքի, ապա XIX դարի կեսին այն արդեն ոչ ասիական, բարեկարգ քաղաք էր՝ ուղիղ, լայն և գիշերը լուսավորվող փողոցներով, իսկ քաղաքի ամբողջ բնակչությունը քիչ թե շատ խոսում էր ռուսերեն, ինչը եզակի երևույթ էր Երևանի նահանգի մյուս քաղաքների համար: Ավելի հանգամանալի և ընդգրկուն դարձնելու համար XIX դարակեսի Ալեքսանդրապոլի նկարագիրը՝ մեջբերենք մի քանի վկայություններ ժամանակի վիճակագրական հաշվետվություններից: Այսպես, ըստ «1852 թվականի Կովկասյան օրացույցի» տվյալների՝ Ալեքսանդրապոլում արդեն 1850 թվականին կային 240 հաստատված ճակատամասով (ֆասադով) տան, 1808 ասիական տիպի քարե տուն, 250 կրպակ, 150 փողոց, 2 հրապարակ, 10 կամուրջ[45]: 1852-1853 թվականների մեկ այլ հաշվետվության մեջ նշվում են Ալեքսանդրապոլի 75 թաղամասեր, 52 աղբյուրներ, 186 ջրհորներ, 2048 քարաշեն անհր, որից 200-ը՝ լավ ճակատամասերով և այդ բոլորը՝ 11 280 բնակչության համար: Շենքերը տեղական սև տուֆից են, կան 1849 թվականին հիմնադրված ուղղափառ եկեղեցի, 2 հայկական եկեղեցիներ՝ Ս.Աստվածածինը և կաթոլիկ եկեղեցին*, 2 շուկա՝ սովորական և անասունների վաճառքի, 7 քարվանսարա, 850 կրպակ, 3 բաղնիս, 1 հրապարակ, 1 նոր և 2 հին հայկական, 1 մահմեդական և մեկ ընդհանուր գերեզմանոցներ[46]: Եվ վերջապես, Երևանի նահանգի քաղաքների անտեսական-քաղաքական կյանքի մասին 1865 թվականի հաշվետվության մեջ Ալեքսանդրապոլի մասին ասվում էր հետևյալը. «Քաղաքը, որ հյուսիսից սահմանակից է Եսասու, Օրթաքիլիսա, Թուխասի, արևելքից՝ Ղոնախ-Ղռան, Հաջի-Նազար-Ղուլի,

---

*[39] Ա ռ ր պ ե տ, Ալեքսանդրապոլի ապագան, «Մխտրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 30 հունվարի, թիվ 3, էջ 1:*

*[40] Զ. Կ ո ր կ ո տ յ ա ն, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում, 1831-1931, Եր., 1932, էջ 94-95:*

*[41] ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83,84: Փաստաթղթի մեջ կա անճշտություն: Ընդհանուր ծխերի թիվը նշվում է 1807: Ընդ որում, թիվ 1581 ծուխը ընդհանրապես չի հաշվվել, իսկ թիվ 1493 ծուխը հաշվվել է մի քանի անգամ: Բացի այդ, քաղաքից հեռացել է 77 ծուխ, հետևաբար արդյունքում պիտի ստացվեր, որ Ալեքսանդրապոլն այդ պահին ուներ ոչ թե 1807, ինչպես տրվում է վիճակագրական հաշվետվությամբ, այլ 1729 ծուխ:*

*[42] ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97:*

*[43] Кавказский календарь на 1855 год, Тифлис, 1854, отд. III, стр. 322-323.*

*[44] В. П е р е в а л е н к о, Поездка в Александрополь, "Закавказский Вестник", Тифлис, 1853, 22 января, ном. 4, стр. 15-16.*

*[45] Р у ц е в и ч, Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края, "Кавказский календарь на 1852 год", Тифлис, 1851, отд. III, стр. 275-276.*

** Ալեքսանդրապոլի եկեղեցիների մասին մանրամասն տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 208, էջ 1-31, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Շախաթունյանի արխիվ, թղթ. 63, վավ. 28, էջ 1-3:*

*[46] Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, СПБ., 1853, стр. 259; նույնը տե՛ս. Документы и материалы по истории Армянского народа. Соцеально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ер., 1993, док. 134, стр. 319, док. 141, стр. 344.*

հարավից՝ Դյուզքյանդ, Թախադոլլակ, Ղարաքիլիսա գյուղերին, իսկ արևմտաքից՝ Արփաչայ գետին, անի 16 337 բնակիչ, որից 8638-ը արական, 7699-ը իգական սեռի են: Քաղաքային բնակչությանն է պատկանում հետևյալ անշարժ գույքը՝ 2870 տուն, 1460 կրպակ, 17 քարվան-սարա, 6 ջրաղաց, 36 գործարան: Ընդ որում, վերը նշվածից ազնըվականությանն են պատկանում 25 տուն, 145 կրպակ, 5 քարվան-սարա, 5 (օճառի) գործարան: Հոգևորականությանը՝ 37 տուն, 74 կրպակ, առևտրականներին՝ 700 տուն, 40 ջրաղաց, կրպակ և գործարան: Մնացած անշարժ գույքը պատկանում է աղքատ խավին»[47]:

Արդեն XIX դարի 50-ական թվականներին Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի զարգացման բավականին բարձր տեմպերը առաջին հերթին հետևանք էին այն համեմատաբար ապահով իրավիճակի, որում հայտնվել էր Ռուսաստանի տիրապետության տակ անցած այս տարածաշրջանը, ապահովություն, որը հնարավորություն էր տալիս տեղի բնակչությանն իր կյանքը նորմալ հունի մեջ դնել, այլև անհրաժեշտ բարենպաստ պայմաններ էր ստեղծում ինչպես քաղաքային շինարարության, այնպես էլ նրա անտեսական կյանքի առաջընթացի համար:

## ГЮМРИ-АЛЕКСАНДРОПОЛЬ В I-ОЙ ПОЛОВИНЕ XIX В.

*Резюме* — *А. Айрапетян*

**Делается попытка представить Гюмри-Александрополь в 1-ой половине XIXв в историко-демографическом аспекте.**

**Важнейшее значение местности этого поселения с военно-политической точки зрения стало более очевидным для России именно после присоединения Грузии к ней (1801г.), наилучшим свидетельством чего стало появление в военных планах российского командования довольно реальных и серьезных намерений о скорейшем овладевании этого поселения и превращения его в важный военный опорный пункт.**

**В 1804г. у захваченного селения в кратчайшие сроки строится приграничная станция с довольно крупным военным контингентом. Однако основательное развитие поселения, оживление его экономической жизни и усиление его военно-политического значения в основном связаны с активной иммиграцией западных армян в 1826-1829гг, с приминением довольно гибкой системы государственных льгот для них, предоставляемых российскими властями, и особенно с началом и с успешным завершением строительства крепости.**

**Сопоставляются все исторические и архивные данные о переименовании Гюмри в Александрополь. Представлен также краткий демографичесий обзор Гюмри-Александрополя I-ой половины XIXв.**

[47] *ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14, 1 մաս, էջ 50-64; նույնը տես. Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издавал Н. Воронов, т. 1, отд. 1, Тифлис, 1869, стр. 36-38.*